ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

22 փետրվարի 2022թ. թիվ 153

Մ.ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ
ՕՁՈՒՆ ԵՎ ԱԼԱՎԵՐԴԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Միեր Խեչումյանին և նույն վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի ավագ մասնագետ Արմեն Շահվերդյանին ս/թ փետրվարի 23-ին մեկ օրով գործուղել Օձուն և Ալավերդի համայնքներ՝ համայնքների ղեկավարների կողմից համայնքների 2021 թվականի բյուջեների կատարման տարեկան և 2021 թվականին համայնքների հնգամյա զարգացման ծրագրերի իրականացման հաշվետվություններին մասնակցելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

22/02/2022

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2022թ. փետրվարի 22
ք.Վանաձոր